ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» հուլիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Ս. Անանյան

ԳԲԽ-75/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 04.07.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 04.07.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնման առարկա է հանդիսացել Պատվիրատուի կարիքների համար բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնի մեջ՝ բջջային հեռախոսակապի ծառայություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.05.2016թ. ընթացակարգի հայտերի բացման նիստում մերժել է Ընկերության ներկայացված հայտը և առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել ընթացակարգի մյուս մասնակցին՝ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին: Շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգով պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ 2016թ. մայիսի 25-ին Հանձանաժողովի կողմից հաստատվել է ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն 27.05.2016թ. բողոք է ներկայացրել (այսուհետ նաև՝ ԳԲԽ-63/16 բողոք) ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ, որով խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին որոշումները:

2. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

գտնում է, որ Հանձնաժողովի կայացրած որոշումներն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) 02.06.2016թ. կայացած որոշմամբ բավարարել է Ընկերության միջնորդությունը՝ կասեցնելու «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-63/16 բողոքը քննող հանձնաժողովի, 15.06.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը. դադարեցրել է ՀՀ կրթության և գիտության

նախարարության կողմից «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. մայիսի 19-ին կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Ընկերությունը նշել է, որ 21.06.2016թ. Հանձնաժողովը, իր գրությամբ տեղեկացրել է Ընկերությանը, որ վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող և Ընկերությունից պահանջել է ներկայացնել Ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), ինչպես նաև ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ Ընկերության գնային առաջարկի վերաբերյալ:

«ԱրմեՏել» ՓԲԸ-ն 23.06.2016թ. Ընկերությունը Հանձնաժողովի գրությամբ սահմանված ձևով, Հանձնաժողովին է ուղարկել գրությամբ պահանջվող փաստաթղթերը և հիմնավորումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.06.2016թ. Ընթացակարգով պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն, որոշում է ընդունել մերժել Ընկերության հայտը՝ պատճառաբանելով (մեջբերում եմ. «Չհիմնավորված ցածր գնային առաջարկ/ներկայացված գնային առաջարկը հաշվարկվել է գնման առարկայի բնութագրում նախատեսված միայն քանակական ցուցանիշների հիման վրա և չի ներառել նույն բնութագրում ներառված այլ ծառայությունների համար նախատեսվող գումարը»): Նույն որոշման համաձայն առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել ընթացակարգի մյուս մասնակցին՝ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին:

Ընկերությունը, գտնում է, որ Հանձնաժողովի կայացրած որոշումներն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր նշել է հետևյալը.

Հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, պատճառաբանել է այն, որ ներկայացված գնային առաջարկը հաշվարկվել է գնման առարկայի բնութագրում նախատեսված միայն քանակական ցուցանիշների հիման վրա և չի ներառել նույն

բնութագրում ներառված այլ ծառայությունների համար նախատեսվող գումարը: Փաստորեն, Հանձնաժողովը կրկին անգամ, ի հեճուկս Խորհրդի կողմից բերված փաստարկների, ցուցաբերել է նույն չհիմնավորված մոտեցումը և ընդունել է նույն որոշումները, որոնք դադարեցվել են Որոշման ուժով:

Ընդունելով այսպիսի որոշումները՝ Հանձնաժողովը չի առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան դրույթով:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի/այսուհետ՝ Օրենք/ 12-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Օրենքի նույն հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը ներառում է նման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Խորհուրդը, հիմք ընդունելով Օրենքի դրույթները, այդ թվում և Օրենքի 12-րդ հոդվածի դրույթները, իր Որոշման մեջ նշել է.

«Եթե Պատվիրատուին, բացի Հրավերի տեխնիկական բնութագրում նշված ծառայություններից, անհրաժեշտ է նաև հավելյալ ծառայություններ, որոնց դիմաց վճարումները ևս պետք է ներառված լինեին ներկայացված գնման առաջարկում, նշանակում է, որ Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագիրը պետք է ներառեր նաև այդ հավելյալ ծառայությունների քանակական ցուցանիշները»:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովը չի կատարել Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ չի առաջնորդվել վերը նշված դրույթներով: Հանձնաժողովը նաև անտեսել է Խորհրդի կողմից ընդունված Որոշումը, պատշաճ կարևորություն չտալով խորհուրդի որոշման իրավապարտադիր լինելու հանգամանքին, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրակացության և կայացրել սխալ որոշումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 45-րդ հոդվածի պահանջով՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին որոշումները:

2. Որպես միջանկյան ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 12.07.2016թ. գրությամբ ներկայացրել է «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ, վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 19.05.2016թ կազմակերպված «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժվել էր գնային առաջարկը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 15.06.2016թ ընդունված թիվ 63/16 որոշումը, Հանձնաժողովը վերանայել է 19.05.2016թ կայացրած «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները, վերագնահատելով մասնակիցների հայտերը էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով և, որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից, «ԱրմենՏել» ՓԲԸ-ին

21.06.2016թ առաջարկել է մինչև ս.թ. հունիսի 24-ը ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկել «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ:

Պատվիրատուն նշել է, որ սահմանված ժամկետում (24.06.2016թ.) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորումը: Մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակցին տրվել է հնարավորություն Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար: Վերջինիս կողմից դրանք սահմանված ժամկետում շտկվելուց հետո, Հանձնաժողովը, 29.06.2016թ քննարկելով մասնակցի կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ տրված հիմնավորումը, այն համարել է ոչ բավարար և առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ և 44-րդ կետի 5-րդ ենթակետերով՝ մերժել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին հայտարարել է 1-ին տեղ զբաղեցրած (ընտրված մասնակից):

Ինչ վերաբերում է ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորումը ոչ բավարար համարելուն, ապա Պատվիրատուն հաշվի է առնել այն, որ հիմնավորմամբ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վերահաստատել է, որ ներկայացված գնային առաջարկը հաշվարկել է գնման առարկայի բնութագրում նախատեսված միայն քանակական ցուցանիշների հիման վրա և չի ներառել նույն բնութագրում նախատեսված այլ ծառայությունները, ուստի մասնակցի կողմից նշված «հավելյալ» ծառայությունները Պատվիարտուի համար «հավելյալ» չեն և դրանք պետք է ներառված լինեին ներկայացված գնային առաջարկում, քանի որ ըստ հրավերի II մասի 4.2 կետի գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, որի հաշվարկը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը): Մասնավորապես, Պատվիրատուի կողմից բնութագրով նախատեսված ռոմինգային

գոտիներում կապի որակյալ և անխափան ապահովումը նշանակում է, որ յուրաքանչյուր երկրում պետք է ապահովվի անխափան կապը, անկախ խոսելաժամանակից և դրա համար նախատեսված բոլոր ծախսերը պետք է ներառված լինեին առաջարկված գնային առաջարկում, ներառյալ խոսելաժամանակի դիմաց հաշվարկված գումարը, այլ ոչ թե դրա դիմաց նախատեսվեր առանձին գումարի գանձում, այլապես անհասկանալի է մասնակցի կողմից անխափան կապի ապահովման գաղափարը:

Պատվիրատուն որպես օրինակ նշել է, որ եթե ձեռք են բերվում որոշ քանակի գրքեր, բնութագրում նշելով էջերի քանակը և նախատեսելով, որ դրանք պետք է տեղափոխվեն ըստ պահանջի, առանց նշելու հեռավորությունը կիլոմետրերով, ապա մասնակիցը գնային առաջարկ ներկայացնելիս պետք է հաշվարկի բնութագրում ներառված միայն քանակական ցուցանիշները և բավական է, որ հավաստի իր պատրաստակամությունը դրանք տեղափոխելու, սակայն տեղափոխման համար պահանջի հավելյալ վճար՝ ներկայացնելով 1 կմ սակագինը:

Ինչ վերաբերում է բնութագրի ոչ հստակ լինելուն, ապա Պատվիրատուն հայտնել է, որ բնութագիրը չի պարունակում ռոմինգային գոտիներում կապի որակյալ և անխափան ապահովման քանակական ցուցանիշներ, քանի որ այն անկանխատեսելի է և հետևաբար անսահմանափակ, իսկ մասնակիցը հնարավորություն ուներ մինչև հայտ ներկայացնելը դիմելու Պատվիրատուին և պահանջելու համապատասխան պարզաբանում և (կամ) հայտ ներկայացնելիս գնահատեր իր ռիսկերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հավաստել է, որ «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում Հանձնաժողովի կայացրած որոշման վերաբերյալ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և Հանձնաժողովի գործողությունները եղել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

3. <u>ԳԲԽ-75/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-75/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԱրմենՏել» ՓԲԸ-ն և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի Հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված է, որ գնման առարկա են հանդիսանում բջջային հեռախոսակապի ծառայությունները.

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Բջջային հեռախոսակապի ծառայություններ	Բջջային հեռախոսակապի տրամադրում 3 հեռախոսահամարների համար: Յուրաքանչյուր հեռախոսահամարի համար բջջային կապի ծառայությունը իր մեջ ներառում է տվյալ ցանցում /ներցանցային/ առնվազն 7500 րոպե ամսական անվճար խոսելաժամանակ, առնվազն 350 րոպե այլ ցանցեր անվճար խոսելաժամանակ /այլ ցանցերը իր մեջ ներառում է նաև ԱՄՆ, ՌԴ, Կանադա և Լեռնային Ղարաբաղի հանրապետություն/, 250 անվճար կարճ /sms/ հաղորդագրություններ ՀՀ բոլոր բջջային ցանցերին և առնվազն 10 000 մեգաբայթ անվճար ինտերնետ: Ռոմինգային գոտիներում կապի որակյալ և անխափան ապահովում: Վճարումը – հետվճարային տարբերակում
Ծառայության մատուցման ժամկետը		
Սկիզբը		Ավարտը
Պայմանագրի կնքման օր		2016թ.-ի դեկտեմբեր

3. Պատվիրատուն 21.06.2016թ. գրությամբ տեղեկացրել է Ընկերությանը, որ վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և Ընկերությունից պահանջել է ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), ինչպես նաև Կարգի 47-րդ կետի 3-րդ

ենթակետով սահմանված՝ համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ Ընկերության գնային առաջարկի վերաբերյալ:

4. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորումը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հունիսի 29-ին ժամը 10:00-ին կայացած նիստի արձանագրության.

• 1.2 կետի համաձայն՝ Հանձանժողովը քննարկելով մասնակցի կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ տրված հիմնավորումը համարել է ոչ բավարար, քանի որ ներկայացված գնային առաջարկը հաշվարկվել է գնման առարկայի բնութագրում նախատեսված միայն քանակական ցուցանիշների հիման վրա և չի ներառել նույն բնութագրում ներառված այլ ծառայությունների համար նախատեսված գումարը:

• 1.3 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում, համաձայն որի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

4. ԳԲԽ-75/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 12.07.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

• 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ***ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ:*** Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Տվյալ դեպքում, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հունիսի 29-ին ժամը 10:00-ին կայացած նիստի արձանագրության.

• 1.2 կետի համաձայն՝ Հանձանժողովը քննարկելով մասնակցի կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ տրված հիմնավորումը համարել է

ոչ բավարար, քանի որ ներկայացված գնային առաջարկը հաշվարկվել է գնման առարկայի բնութագրում նախատեսված միայն քանակական ցուցանիշների հիման վրա և չի ներառել նույն բնութագրում ներառված այլ ծառայությունների համար նախատեսված գումարը:

• 1.3 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում, համաձայն որի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը Ընթացակարգին ներկայացված գնային առաջարկի հիմնավորման վերաբերյալ տեղեկացրել է, որ ընդհանուր գնային առաջարկի հաշվարկը կատարվել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ում գործող «Սմարթ 7500» սակագնային փաթեթի սակագներով 3 հեռախոսահամարի համար համաձայն հրավերում առկա մատուցվելիք ծառայությունների քանակական ցուցանիշների (մինչև դեկտեմբեր 2016թ. ներառյալ ժամանակահատվածի համար՝ 7500 դրամ ամսական վճար/ x3 /հեռախոսահամար/ x7 /ամիս/=157 500 /ընդհանուր գինը/):

Բացի այդ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնել է նաև, որ անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր հեռախոսահամարի համար, հետվճարային պայմանագրային հիմունքներով, հնարավոր է ակտիվացնել և մատուցել «ԱրմենՏել» ՓԲԸ-ում գործող սակագներով, անհատական լրացուցիչ ձայնային, ռոմինգ և այլ ծառայությունների փաթեթներ: Ինչպես նաև, բջջային կապի ցանկացած օպերատորի բաժանորդ կարող է դառնալ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ ապրանքանիշը Beeline, հաճախորդ՝ պահպանելով իր բջջային հեռախոսահամարը:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերությունը իր գնային առաջարկի հիմնավորումը ներկայացրել է՝ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան՝ անդրադառնալով ինչպես քանակական ցուցանիշներով սահմանված պահանջներին, այնպես էլ այլ ծառայություններով, մասնավորապես ռոմինգ ծառայությամբ ապահովելու հնարավորությանը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված «*ռոմինգային գոտիներում կապի որակյալ և անխափան ապահովումը*» նշանակում է, որ *յուրաքանչյուր երկրում պետք է ապահովվի անխափան կապը, անկախ խոսելաժամանակից, ներառյալ խոսելաժամանակի դիմաց հաշվարկված գումարը,* ապա գտնում ենք, որ Պատվիրատուի նման պնդումը անհիմն

է, քանի որ գնման առարկայի բնութագրում չկա որևէ հստակ նշում ռոմինգ ծառայությունից **անսահմանափակ** օգտվելու պահանջի մասին:

Այսինքն, մասնակիցների կողմից նման պայմանը ընդունելու դեպքում անգամ՝ անկախ ներկայացրած գնային առաջարկի մեծությունից, Հրավերով ներկայացված պայմանագրի նախագծի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պայմաններում, տվյալ Ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագիրը ծառայություն մատուցող ընկերության համար չի կարող առաջացնել պայմանագրի գնի սահմաններում **անկախ խոսելաժամանակից** ռոմինգային գոտիներում կապի ծառայություն մատուցելու պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 04.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հունիսի 29-ին կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-75/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան